

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.
ուն դիմել, որտեղից ստանալ**

Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ստացումն առաջին կարևոր քայլն է բնապահպանական որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և շրջակա միջավայրը պահպանելու հարցերում:

Որ տեղեկատվությունն է համարվում բնապահպանական

Շրջակա միջավայրի բոլոր տարրերի վիճակը, ինչպես նաև գործոնները, գործունեությունը կամ միջոցները, որոնք ներգործում են կամ կարող են ներգործել շրջակա միջավայրի վերը նշված տարրերի վրա, համարվում են էկոլոգիական՝ բնապահպանական տեղեկատվություն:

Քանի որ շրջակա միջավայրի որակը համընդհանուր բարօրության հարց է, ուստի շրջակա միջավայրին վերաբերվող ամբողջ տեղեկատվությունը պետք է մատչելի ու հասկանալի լինի:

Տեղեկատվության մատչելիությունը մարդու իրավունքն է, որն ամրագրված է միջազգային օրենսդրությամբ, սահմանադրություններով, առանձին օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով կամ կանոնակարգերով, որոնք հանդիսանում են օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի մաս:

Հայաստանի Հանրապետությունը 2001թ. ստորագրել և վավերացրել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան (այսուհետև՝ «Օրհուսի կոնվենցիա»): Արդեն առկա է նաև ազգային մակարդակով Կոնվենցիայի պահանջների կիրառումն ապահովող օրենսդրական բազա, որի համաձայն **քաղաքացիները իրավունք ունեն** ստանալ տեղեկատվություն, որը՝

- ուղղակի կամ միջնորդավորված կապ ունի իրենց հետ,
- վերաբերվում է հասարակական շահ ներկայացնող հարցերին,
- ինչ-որ մի եղանակով ազդում է կամ կազդի իրենց կյանքի, ընտանիքի, առողջության կամ շրջակա միջավայրի վրա:

Օրհուսի Կոնվենցիան **պետական մարմինների** վրա դնում է հետևյալ պարտականությունները.

- կատարել բնապահպանական տեղեկատվության հավաքագրումը,
- ապահովել բնապահպանական տեղեկատվության ազատ հասանելիություն,
- ակտիվորեն տարածել բնապահպանական տեղեկատվության որոշակի ձևեր.

Կոնվենցիայի **հիմնական սկզբունքն** այն է, որ ամբողջ բնապահպանական տեղեկատվությունը մատչելի լինի հասարակության համար, բացի այն տեղեկատվությունից, որի հանդեպ բացառություն է սահմանված:

Որտեղից կարելի է ստանալ բնապահպանական տեղեկատվություն:

Բնապահպանական տեղեկատվության հավաքագրման և տարածման համար պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են.

ՀՀ բնապահպանության նախարարություն

Տեղեկատվություն շրջակա միջավայրի բոլոր բաղադրատարրերի՝ ջրերի, հողերի, մթնոլորտային օդի, կենդանական և բուսական աշխարհի, լանդշաֆտների, ընդերքի վիճակի մասին, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքների (ՇՄԱԳ), տեսչական գործունեության արդյունքների, բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության, ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում միջուկային և ճառագայթային անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանական օրենսդրության, պլանների և ծրագրերի, ՀՀ կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի մասին և այլն:

www.mnpiac.am հեռ. 52-38-35

- Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն
հեռ. 54-08-67
- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն
հեռ.56-51-96
- Երկրաբանության գործակալություն
հեռ. 55-57-50
- Կենսառեսուրսների կառավարման գործակալություն
հեռ. 52-79-52
- Բնապահպանական պետական տեսչություն
հեռ. 52-37-99
- Ատոմային էներգիայի օգտագործման միջուկային եւ ռադիացիոն անվտանգության տեսչություն
հեռ. 54-39-91

ՀՀ առողջապահության նախարարություն

Տեղեկատվություն շրջակա միջավայրի բաղադրատարրերի սանիտարա-համաճարակաբանական վիճակի, խմելու ջրի և մթնոլորտային օդի որակի, ինչպես նաև շրջակա միջավայրի տեսանկյունից բնակչության առողջական վիճակի գնահատման, կանխատեսման և դրա վերաբերյալ հետազոտությունների և այդ ոլորտում օրենսդրության, պլանների և ծրագրերի մասին:

www.arminhealth.am հեռ. 56-53-23

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Տեղեկատվություն ոռոգման համար օգտագործվող ջրի քանակի և որակի մասին: Երկրի հողային ֆոնդը՝ ըստ հողօգտագործման, հողի տեսակների ու կատեգորիաների: Տեղեկատվություն անտառների մասին, օգտագործվող հողերի, դրանց վատթարացման, աղտոտման աստիճանի և պահպանման, պարարտանյութերի, թունաքիմիկատների, պեստիցիդների կիրառման և այդ ոլորտում օրենսդրության, ծրագրերի ու նախագծերի մասին և այլն:

www.minagro.am հեռ. 52-48-60

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

Տեղեկատվություն տրանսպորտի, դրա ձևերի զարգացման պլանների, երկրում տրանսպորտի զարգացման ռազմավարության մասին: Գործող կանոնադրության և օրենսդրության համաձայն, ճանապարհների շինարարության նախագծերը ենթարկվում են էկոլոգիական փորձաքննության՝ ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի:

www.mtc.am

հեռ. 56-63-03

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Տեղեկատվություն երկրում քաղաքաշինության հարցերի, կառուցման համար նախագծվող քաղաքային ինֆրակառույցների օբյեկտների վերաբերյալ հասարակական լուսնների արդյունքների, շենքերի հակահրդեհային և սեյսմիկ կայունության նորմերի, շինարարության ժամանակ հողերի օգտագործման, կանաչ տարածքների պահպանման, շինանյութերի օգտագործման, քաղաքի գլխավոր հատակագծի նախապատրաստման, օգտագործման մասին:

www.cp-pic-msw.am

հեռ. 52-43-67

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Տեղեկատվություն քաղաքականության, պլանների և երկրում աղքատության և բնօգտագործման միջև կապի վերլուծության մասին:

www.mss.am

հեռ. 52-14-31

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

Տեղեկատվություն բնական ռեսուրսների և բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման, բնական ռեսուրսների պահպանմանը, պաշտպանությանը և վերականգնմանն ուղղված պետական բյուջեի բաժինների, բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման և նրանց ֆինանսական հաշվետվությունների, պլանների, նախագծերի և այդ ոլորտում օրենսդրության մասին:

www.mfe.am

հեռ. 59-53-63

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

Տեղեկատվություն շրջակա միջավայրի հետ կապված տարածքային կառավարման հարցերի մասին (ծրագրերի և պլանների մշակում) և այլն:

www.region.am

հեռ. 52-03-21

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե

Տեղեկատվություն ջրօգտագործման բոլոր ձևերի, ջրօգտագործման համար նախատեսված ջրերի, այդ թվում քաղցրահամ ջրերի քանակի, ջրահեռացման, ջրային աղբյուրների վիճակի մասին: Այս մարմինը կարգավորում է նաև ջրային տնտեսության համակարգը երկրում: Տեղեկատվություն օրենսդրության, ծրագրերի և նախագծերի մասին:

հեռ. 54-09-09

ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն

Տեղեկատվություն տարերային աղետների, սեյսմիկ վիճակների, շրջակա միջավայրի պահպանման և բնակչության պաշտպանության համար ձեռնարկվող միջոցների վերաբերյալ, տեղեկություններ վտանգների և ռիսկի հիմնական աղբյուրների, վթարային իրավիճակները կրճատելու շուրջ միջոցառումների և պլանների, ծրագրերի և այդ ոլորտի օրենսդրության մասին:

www.ema.am

հեռ. 56-76-56

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Տեղեկատվություն շրջակա միջավայրի վիճակի, ջրի, օդի, հողի մեջ աղտոտող նյութերի արտանետման և թափոնների, բնապահպանական վիճակագրության պետական հաշվառման, ստուգման, հրապարակման, օրենսդրության մասին:

www.armstat.am

հեռ. 52-42-13

ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե

Տեղեկատվություն ներմուծվող և արտահանվող ապրանքների, այդ թվում բույսերի և կենդանիների, սերմերի, օգոնային շերտը քայքայող նյութերի, զենետիկորեն ձևափոխված օրգանիզմների, ինչպես նաև դրանց ներմուծման և արտահանման համար վճարների հավաքման մասին:

www.customs.am

հեռ. 53-84-34

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Տեղեկություններ հողամասերի հաշվառման, դրանց հետ կապված անշարժ գույքի, դրանց բնական, տնտեսական և իրավական կարգավիճակի, չափերի և բաշխման, որակական բնութագրերի, քարտեզագրության և հողամասերի գնահատման մասին:

www.cadastre.am

հեռ. 56-74-62

ՀՀ ոստիկանություն

Տեղեկատվություն ավտոտրանսպորտից արտանետվող գազերի բաղադրության, տեխնոնման տվյալների, շրջակա միջավայրի ոլորտում իրավախախտումների և դրանց քանակի, ինչպես նաև անօրինական ծառահատման, ձկնորսության և որսի միջոցների բռնագրավման դեպքերի մասին:

www.police.am

հեռ. 52-38-58

ՀՀ գլխավոր դատախազություն

Տեղեկատվություն պետական շահերի պաշտպանության, այդ թվում բնության պահպանության համակարգում. շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրավախախտումների, դրանց ձևերի, ուղղվածության, բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման արդյունքում կրած վնասների մասին և այլն:

հեռ. 56-76-72

ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (Մարզպետարաններ)

Տեղեկատվություն անտառահատման, անօրինական ձկնորսության, բնության հատուկ պահպանվող տարածքներում որսագողության դեմ կազմակերպվող միջոցառումների անցկացման, գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում կառավարության որոշումների և այլ որոշումների օպերատիվ ու արդյունավետ իրագործման ապահովման ընթացքի մասին:

- Գեղարքունիքի մարզպետարան. Բնապահպանության վարչություն հեռ. (0264) 2-40-88
- «Սևան» ազգային պարկ հեռ. (0261) 2-40-44
- Տավուշի մարզպետարան. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն հեռ. (0263) 3-16-97
- «Դիլիջան» ազգային պարկ հեռ. (02680) 70-32, 71-71

Որքան ճիշտ և պարզ կլինի հարցումը, այնքան հեշտ կլինի ժամանակին և ամբողջական պատասխան ստանալը: Տեղեկատվություն ստանալու համար հարցում կարող է կատարվել`

- գրավոր նամակով կամ ֆաքսով,
- էլեկտրոնային տարբերակով (e-mail),
- հեռախոսով,
- անձամբ:

Աիդա Իսկոյան
«Շրջակա միջավայրի իրավական
պահպանության կենտրոն» ՀԿ նախագահ

Հրատարակվում է Բնական պաշարների կառավարման և
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ
www.reforms.am

տպաքանակը՝ 5 000